ՆԱԽԱԳԻԾ -Ա

№26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

«19» դեկտեմբեր 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԳՅՈՒՂԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի **Տեղ համայնքի ավագանին *որոշում է.***

1.Տալ հավանություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի 12-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.07963 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «Բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0065-0016) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով **409935.24 (չորս հարյուր ինը հազար ինը հարյուր երեսունհինգ ամբողջ քսանչորս հարյուրերորդական)** ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Որոշման նախագծի ընդունման նպատակն է համայնքի զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերն իրականացնելու և համայնքի բյուջեի եկամուտներն ապահովելու համար օտարել համայնքային սեփականություն հանդիսացող Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի **12-րդ փողոցի թիվ 5** հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող **0.07963** հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

ՏԵՂԵԿԱՆՔ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքային սեփականություն հանդիսացող վերոնշյալ հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում նախատեսվում է եկամուտների ավելացում՝ նախնական հաշվարկներով **409935.24 (չորս հարյուր ինը հազար ինը հարյուր երեսունհինգ ամբողջ քսանչորս հարյուրերորդական)** ՀՀ դրամով:

Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար՝ Լիանա Մանուչարյան

19.12.2023թ.